

ՆԱՐ-ԴՈՍԸ ԿՅԱՆՔԻ ԻՄԱՍՏԻ ՄԱՍԻՆ

ՎԱԼԵՐԻ ՄԻՐԶՈՅԱՆ

Նար-Դոսը (Միքայել Հովհաննիսյան, 1867 – 1933) առաջին անգամ հայ ընթերցողին ներկայանում է դպրոցական տարիներին, անջնջելի տպավորություն թողնում հատկապես «Մեր թաղը» պատմվածաշարով, ապա ուղեկցում ողջ կյանքի ընթացքում: Մարդկային բազմաբարդ փոխհարաբերությունների, արատների, կենսական թշվառության, տառապանքների, միմյանցից օտարվածության, ընտանեկան ողբերգությունների, արժանավայել կյանքի համար պայքարի նարդոսյան նկարագրությունները ոչ ոքի անտարբեր չեն թողնում: Հասուն տարիքում մեզ գրավում են հանրային կյանքի հակասությունների խոսուն պատկերները, տարբեր կենսադիրքորոշման անհատների բախումները, հավատարմության և դավաճանության երկրնտրանքի առջև հայտնված անձանց բարոյական տատանումները, կյանքի և մահվան մասին նարդոսյան կերպարների և հենց իր՝ խորագրաց հեղինակի փիլիսոփայական մտորումները: Վերընթերցելով «Զագունյան» (1890), «Պայքար» (1911), «Մահը» (1912) վեպերը, «Աննա Մարոյան» (1888), «Սպանված աղավնի» (1898) վիպակները, «Ես և նա» (1889), «Խմբագիրը» (1913) պատմվածքները՝ ծանոթանում ենք 19-րդ դարի վերջի – 20-րդ դարակզբի մարդկանց կերպարներին, խորանում նրանց հուզող խնդիրների մեջ: Նաև համոզվում ենք, թե որքան արդիական է Նար-Դոսի ժառանգությունը, որքան օգտակար են նրա արձարձած թեմաներն ամեն մեկիս սեփական կյանքն իմաստավորելու, կենսական բարդություններն ըմբռնելու և հաղթահարելու համար:

Շիտակ մտավորականը մեր օրերում թե՛ տնտեսապես, թե՛ բարոյապես և թե՛ սոցիալապես բնավ ավելի լավ վիճակում չէ, քան մշտական անփողությունից նեղվող գրականության մշակ Պատրիկյանը («Նեղ օրերից մեկը», 1904), որպես «քնձոռտ վարժապետ» պիտակավորված և կոպտորեն մերժված փեսացուն («Տանտիրոջս աղջիկը», 1901) կամ գոռոզամիտ տանտիրուհու արհամարհանքի թիրախ խմբագիրը («Խմբագիրը»): Տեսնում ենք գյուղից սերած, բայց գյուղ չսիրող և ոչ էլ լիարժեք քաղաքացի դարձած գրամոլների («Մինաս Փափախյան», 1887), եվրոպական արժեքներից ճամարտակող, սակայն ընտանիքում ամենաբիրտ վարվելակերպի տեր անձանց («Նոր հավ», 1889), մեծահարուստների հղփացած զավակների («Աղա Մարտինի պարիկը», 1890): «Նոր Հայաստանի» հույսով ապրող մեր շատ համաքաղա-

քացիների պայքարը հանապազօրյա հացի համար առանձնապես չի տարբերվում Նար-Դոսի պատկերած հասարակ մարդկանց առօրյայից: 21-րդ դարի հայ հասարակությանը նույնքան բնորոշ են գրքացները, բախտագուշակները, «թուղթուգիր» անողները, տարատեսակ սնտոխապաշտությունները, կրոնախններն ու սուտ հավատացյալները, միով բանիվ՝ այն թանձր խավարամոլությունը, որին հանդիպում ենք Նար-Դոսի երկերում: Բհարկե, տեխնոլոգիան զարգացել է. «Ինչպես բժշկեցին» (1889) պատմվածքի գրքաց Գրիգորը հիվանդի միջից սատանային հալածելու համար հնադարյան մեթոդներ է գործադրում, այսօր նրա «գործընկերներն» անսահման հնարավորություններ են ստացել հեռուստատեսերով ծանրումեծ դատողություններ անելու իրենց «բուժական» զորության, «չարը խափանելու» հմտության, տիեզերքից ստացվող «աստրալ էներգիայի» մասին և այլն: Կամ՝ Նար-Դոսի ստեղծագործություններում շատ են ինքնասպանությունները, բայց մի թե մեր կյանքից դրանք իսպառ վերացել են. եթե հանրությունը չի բարձրաձայնում դրանց մասին, խնդիրը ինքնին չի վերանում:

Ձեռնամուխ լինելով Նար-Դոսի ստեղծագործություններում մարդու կյանքի իմաստի վերաբերյալ դատողությունների քննարկմանը՝ սկզբից նեթ նկատենք, որ նա խնդիրը դիտարկում է բնավ չպարփակվելով անհատի ապրումների շրջանակում: Որքան էլ անձնավորված է կյանքի իմաստավորումը, դա նախ արտացոլումն է արտաքին հանգամանքների, հանրային կյանքի սոցիալ-տնտեսական և քաղաքական բնութագրերի, իշխող բարոյականության, արժեքային համակարգի և երկրորդ՝ հակադարձ ազդեցություն է գործում միջավայրի վրա: Ուստի և իր հերոսի ինքնասպանությունը, դիցուք՝ Աննա Մարոյանի պարագայում, Նար-Դոսը մեկնաբանում է որպես սոցիալական միջավայրի ազդեցության անխուսափելի հետևանք, երբ բարքերը գրկում են անհատին ինքնուրույն ընտրության հնարավորությունից, ճգնաժամային պայմաններում պայքարելու կամքից: ««Աննա Մարոյանի» նյութը, – տեղեկացնում է հեղինակը, – վերցրել եմ 80-ական թվականների հայ բուրժուական ընտանիքի կյանքից: Նպատակս եղել է ցույց տալ նյութական վրա հիմնված մի ընտանիքի կործանումը և այդ ընտանիքում մեծացած աղջկա տրագեդիան՝ այն դեպքում, երբ այդ ընտանիքի միակ հեղինարանը՝ նյութականը, քանդվում է»¹: Հատկապես «Մահը» ծավալուն վեպը, որի վրա Նար-Դոսն աշխատել է ավելի քան երկու տասնամյակ, նրա սեփական հավատո հանգանակի ձևակերպումն է: Մի առիթով խոստովանել է. ««Մահը» վեպիս մեջ ուզեցել եմ գծել կյանքի և մահվան պրոբլեմը գործունեության եռանդով լեցուն լավատեսի և ապատիայի ենթարկված հոռետեսի իրար հակադիր տեսակետներից» (4, էջ 66): Նար-Դոսն ինքն է լավագույն տիպարը եռանդով լեցուն, գործունյա լա-

¹ **Նար-Դոս**, Երկեր չորս հատորով, հ. 4, Եր., 1990, էջ 65: Նար-Դոսից բոլոր մեջբերումները սույն քառահատորից են, այսուհետև նշվելու են տեքստի մեջ:

վատեսի. ողջ կյանքում չնչին վարձատրությամբ լրագրող, սրբագրիչ, խմբագիր աշխատելով (ստեղծագործելով միայն ազատ ժամերին, քնի հաշվին²)՝ գրողը չի կորցրել հավատը կյանքի հանդեպ, իրեն և իր հերոսներին ուղղորդում է դեպի լիարժեք կենսագործունեություն, տոգորում վստահությամբ և լավատեսությամբ:

Մինչ բովանդակային վերլուծությանն անդրադառնալը հակիրճ բնութագրենք հեղինակի կենսափիլիսոփայությունը. ո՞րն է ըստ նրա՝ կյանքի իմաստը: Պատասխանը գտնում ենք գրողի նամակներում. մասնավորապես՝ երբ հոգեհարազատ բարեկամներից մեկին պատմում է նոր մտահղացումների մասին, չի դիմանում և խոստովանում է. «Ա՛խ, ինչքան քաղցր է ստեղծագործելը: Աշխարհիս երեսին ո՛չ մի քաղցրություն դրան չի հասնիլ: Կյանքիս մեջ միակ բարոյական, առողջացնող, ազնվացնող և քնքշացնող զվարճությունն ու երջանկությունը, որ զգացել եմ ես և զգում եմ, այդ այն ժամանակն է միայն, երբ եռանդ կա և գրում եմ: Ուրիշ ո՛չ մի բան ինձ այդ քաղցրությունը չի պատճառել և չի պատճառում» (4, էջ 87 – 88): Գրողի կերպարն ամբողջական դարձնելու նպատակով հիշատակենք խոսքի հանդեպ նրա բժախնդրությունը, պահանջկոտությունը, կատարելության ձգտումը. Նար-Դոսն անաչառ գրաքննադատ է թե՛ իր, թե՛ ուրիշի համար, սիրով և երախտագիտությամբ է ընդունում իր հասցեին արված դիտողությունները և նրբանկատորեն բացատրում սեփական դիտավորությունը իր քննադատած հեղինակին: Այս տեսակետից շատ ուսանելի է գրողներից մեկի վեպի մասին հայտնած կարծիքը. «Խոսք չկա, Ձեր ընտրած նյութը համակրելի է. բայց վերոհիշյալ պակասությունների պատճառով այդ նյութը մեռած տառ է մնում, որ զգացնելու, տպավորություն գործելու, նույնիսկ օրինակելի դառնալու ոչինչ ուժ չունի: Գուցե ես ավելի խիստ եմ վերաբերվում Ձեր գրվածքին, քան այդ պետք է, բայց ի՛նչ արած. ես գրում եմ այն տպավորության տակ, ինչ տպավորություն որ գործել է ինձ վրա այդ գրվածքը: Ի վերջո մի նկատողություն, թեև Դուք ինձ գրել եք, որ իմ աննպաստ անկեղծ կարծիքից չեք նեղանա, բայց ես հաստատ համոզված եմ, որ Դուք, եթե իմ կարծիքս Ձեր գրվածքի մասին արդարացի էլ գտնեք, իմ խիստ խոսքերից անշուշտ նեղանալու եք Ձեր սրտի խորքում: Խնդրում եմ ինձնից մի թաքցրեք և գրեցեք ճշմարիտը, թե արդյոք իմ այդ համոզմունքս ճիշտ է, թե սխալ» (4, էջ 82 – 83)³:

Նար-Դոսի հերոսները կյանքի իմաստի և անիմաստության մասին մտորում են այնպես, ինչպես ամեն ոք. առօրյայում այդ մտորումները

² Այդ մասին ինքը ցավով արձանագրել է 1918 թ. գրած հակիրճ ինքնակենսագրականում. «Իմ սեփական գրական աշխատանքներիս համար մնում էին գիշերային ժամերը, և այդ ժամերին եմ գրել ես գրական երկերս մեծ մասամբ: Այստեղից պարզ պիտի լինի, թե ինչու ես այսքան քիչ բան եմ գրել համեմատաբար» (4, էջ 55 – 56):

³ Ի դեպ՝ քննադատության հասցեատերը երախտագիտությամբ դա ընդունել է. Նար-Դոսին ուղղված նամակներում դիմելվածը փոփոխվում է՝ առաջինը՝ «Պարոն Հովհաննես», երկրորդը՝ «Հարգելի Հովհաննես», այնուհետև մյուսները՝ միայն «Միրելի Հովհաննես»:

«բթացած են», բայց շատ սուր են դրսևորվում ցնցումների, անսպասելի կորուստների, տառապանք պատճառող իրադարձությունների ժամանակ: Բնութագրական է «Աննա Սարոյան» վեպ-նամականին: Աննան մեծացել է հարուստ և երջանիկ ընտանիքում (հայր, մայր, երեք եղբայր), ապրել, իր բնութագրմամբ, «լիության և փափկակեցության մեջ», շրջապատված դայակներով և աղախիններով, ամեն մի ցանկությունն անմիջապես կատարվել է: Եվ ահա փլուզում՝ հայրը, պարզվում է, մոլի խաղացող է եղել, հսկայական պարտքեր է կուտակել, և ընտանիքը կորցնում է ամեն ինչ, հայտնվում չքավորության եզրին: Հաջորդում է ավելի մեծ դժբախտություն. հայրն անդամալույծ է դառնում և խելագարվում, այլևս չի ճանաչում տնեցիներին: Աննայի փոքր եղբայրը թոքախտից մահանում է, ավագ եղբայրը հարբեցող է, ոչ մի պաշտոնում նրան չեն հանդուրժում, մյուս եղբայրն էլ ծուլության մարմնացում է: Աննան այս ամենի մասին, ըստ դեպքերի հերթականության, պատմում է «ամենասրտակից ընկերուհուն» գրած նամակներում, խոստովանում հոգևոր տանջանքները, սեփական կյանքի ունայնությունը, իսկ վերջին նամակում տեղեկացնում է, որ թույն է խմել («ապրելն ինձ համար անհնարին էր») (1, էջ 482):

Փորձենք հասկանալ ողբերգության պատճառը: Աննան մեծացել է անհոգ, անհոգս, բայց և պարզվում է... կյանքի համար ոչ պիտանի, անկարող ինքնուրույն որևէ գործ անելու: Պատահական չէ, որ մինչ ցավալի դեպքերը, երբ Աննան դժգոհում էր իր տաղտկալի առօրյայից, ընկերուհին խորհուրդ է տալիս օգտակար որևէ զբաղմունք գտնել, Աննան պատասխանում է. «Դու աշխատում ես բացատրել հոգեկան օտարոտի դրությունս և գտնում ես, որ այդ պարապությունից, անգործ լինելուց է: Գուցե մասամբ ճիշտ է այդ, բայց այս էլ կա, որ ես դեպի ոչ մի գործ ձգտում չեմ զգում: Եվ ի՞նչ գործ կհրամայեիր, որ կատարեի, ի՞նչ անեի, ինչո՞վ զբաղվեի, քանի որ մի հասարակ գործվածք անգամ մինչև վերջը համբերություն չունիմ տանելու և ամեն բան, ինչ ձեռքս եմ առնում, ձգում եմ կիսատ... » (1, էջ 427): Առերևույթ՝ միանգամայն զգաստ ինքնագնահատական է: Բայց Նար-Դոսը նրբորեն արձանագրել է Աննայի դիրքորոշման փոփոխությունը՝ ինքնամեղադրանքից անցումը լայն ընդհանրացման. «Ա՛խ, Հռիփսիմե, անգին քույրիկս, որքան դառն, որքան անտանելի է կյանքը... Գոնե նա այնքան չնչին չլինեք, գոնե նա ունենար մի մեծ նշանակություն, մի մեծ նպատակ, որի համար արժենար կրել նրա տված այսքան դառնությունները... Ոչնչի համար չարաչար տանջվել, մի թե մարդս դրա համար է միայն ծնված... » (1, էջ 442): Ձգտումների, նպատակների, զբաղմունքի բացակայությունը փոխում է մարդու աշխարհայացքը, հանգեցնում հոռետեսական փիլիսոփայության. «Ոչնչությունն, ոչնչությունն, ոչնչությունն՝ արտասանում եմ ինքս ինձ և զգում եմ, որ սրտիս մեջ այլևս ոչ մի վիշտ, ոչ մի դառնություն չկա. մարդկային զգացողական բոլոր կարողություններս, կարծես, միանգամից դադարում են գործելուց կամ ոչ մի կարիք չեն ունենում

գործելու: Հավատը, հույսը և սերը, որոնք մարդկային կյանքի հիմունքն են համարվում, կարծես փշրվում, չքանում են իմ մեջ և այնուհետև ամեն բանի, մինչև անգամ մեր թշվառության վրա սկսում եմ նայել խորին սառնասրտությամբ, նույնիսկ արհամարհանքով...» (1, էջ 442 – 443):

Ցավալի վերջաբան է, ինչ խոսք, բայց և պիտի ընդունենք Նար-Դոսի տրամաբանությունը. մեկ այլ հանգուցալուծում պարզապես հնարավոր չէր: Եվ իր հերոսի շուրթերով նա հիմնավորել է ինքնասպանության անխուսափելիությունը: «Իգուր ես ինձ երկար ու բարակ խրատներ կարդում,– գրում է Աննան նախավերջին նամակում.– իգուր ես աշխատում ապացուցել ինձ, որ իմ այս խելքով, հասկացողությամբ ես չեմ կարող և չպետք է այսպես լինեմ, որ ես գոռով եմ այսպես անում և անարդարացի կերպով չարախոսում ինքս ինձ վրա: Ես ինքս էլ այդպես եմ կարծում, բայց արի տես, որ անիծյալ իրականությունը խելք և հասկացողություն չի պահանջում, այլ կյանքի համար պատրաստություն. իսկ հենց այդ բանն է, որ չունեմ, բայց թե ինչո՞ւ չունեմ, այդ ինքդ էլ շատ լավ կարող ես հասկանալ, եթե քրքրես անցյալս և դաստիարակությունս... Ես հրաշքների չեմ սպասում և ոչ էլ ինքս կարող եմ հրաշքներ գործել... Որքա՞ն եմ ատում ինքս ինձ, որքա՞ն եմ զզվում ինքս ինձնից... » (1, էջ 481):

Հրաշք, թերևս, հնարավոր էր, եթե հեղինակն իր հերոսին դուրս բերեր ընտանեկան անձուկ միջավայրից դեպի հանրային կյանք, մտցներ տարատեսակ կապերի և փոխհարաբերությունների մեջ, ստիպեր ապրել ու տազնապել ոչ միայն ընտանեկան և անձնային, այլև համահանրային խնդիրներով: Սակայն Նար-Դոսը հավատարիմ է իր հիմնական գաղափարին՝ ջերմոցային պայմաններում մեծացած, ինքնուրույնություն ձեռք չբերած, ըստ էության՝ պորտաբույծ անձը պատրաստ չէ իրական կյանքի հանկարծահաս փոփոխություններին: Այս գաղափարը Նար-Դոսը շարունակ կրկնում է ընթերցողի համար որպես յուրատեսակ նախազգուշացում՝ չլինել անպատրաստ, ինչպես որ Աննա Մարոյանը. «Շա՛տ վատ խաղ է խաղացել ինձ հետ ճակատագիրը. հանկարծակի և անպատրաստ, նա շարտել է ինձ այդ դառն, այդ սոսկալի իրականության առջև և ասում է՝ հաստատուն մնա: Ա՛խ, թշվառականս ի՛նչ եմ ստացել, որ ինչ տամ... » (1, էջ 459):

Եվս մի կարևոր դիտարկում: Իհարկե, Աննայի հոգեկան տառապանքներն աննկատ չէին կարող մնալ. կրտսեր եղբայրը՝ մահացու հիվանդ Գրիգորն է փորձում հասկանալ և մխիթարել քրոջը. «Առաջ դու միշտ ուրախ էիր, միշտ անհոգ, միշտ ժպտում կամ ծիծաղում էիր, ոչ մի ժամանակ չէի տեսել, որ տխուր լինեիր կամ որևիցե բանի մասին լուրջ մտածեիր, թեև մեր շուրջը, առօրյա կյանքի մեջ միշտ եղել են թեկուզ մեր անձնականությանն ուղղակի չվերաբերող այնպիսի երևույթներ, որոնց մասին արժեր և արժե, որ ամեն մեկը տխրեր և լուրջ մտածեր» (1, էջ 457): Եղբայրը քրոջը փորձում է ուղղորդել դեպի հավատքը, հորդորում է աղոթել, փրկարար աղոթքի միջոցով հասնել հոգեկան և

բարոյական խաղաղության: Բայց այստեղ էլ բարդությունն այն է, որ Աննան բնավ էլ հավատացյալ չէ (գոնե այնքան, որ ինքնասպանության մեղքից խուսափեր) և ոչ էլ համոզված աթեիստ, այնպես որ, ցավոք, հրաշք չէր կարող տեղի ունենալ:

Մյուս ստեղծագործությունը, որտեղ Նար-Դոսը հանգամանորեն անդրադառնում է կյանքի և մահվան իմաստի հարցերին, «Մահը» վեպն է: Այստեղ նա համադրում է գրեթե հասակակից հայ չորս երիտասարդի կենսակերպ: Արմենակ Մարությանը իրեն նվիրել է արևմտահայության ազատագրմանը և նահատակվում է թուրքական բանտում: Նրան վեպում անմիջապես չենք տեսնում, բայց նա իրական կերպար է, և ոչ միայն այն պատճառով, որ նրա մասին տեղեկանում ենք ծնողների և քույրերի տազնապալից խոսակցություններից, դրսի լուրերից, ի վերջո՝ մահվան բոթից: Հայրենիքի ազատագրման համար պայքարողի կերպարը մի տեսակ ընդհանուր խորապատկեր է դառնում մյուսների վարքի գնահատման համար:

Մյուս երիտասարդի՝ Մինասյանի գործունեությունն ուղղված է գյուղացիների կրթությանը. չորս տարի է, ինչ մի գյուղում ուսումնարան է բացել, կռիվ է տալիս շենքային և գույքային պայմանների համար, վազվզում է լավ դասատուներ գտնելու (որ կհամաձայնեն աշխատել ցածր վարձատրությամբ, բայց հայ գյուղացուն օգնելու առաքելության զգացումով): Զրուցակիցներին նա կրքոտ բացատրում է գյուղացուն կրթելու և գյուղատնտեսական աշխատանքի նորագույն մեթոդներով և գործիքներով զինելու կարևորությունը: Ի տարբերություն վեպի մյուս կերպարի՝ ոչնչով չզբաղվող Լևոն Շահյանի, որը ոչ մի իմաստ չի տեսնում ընկերոջ արածների մեջ, Մինասյանը վերջինիս բացատրում է վիճակի պատճառը. «Եթե մի բան կա, որի պատճառով գյուղացին անտարբեր է դեպի կրթությունն առհասարակ, այդ նրա տնտեսական ծանր դրությունն է միայն: Հացի խնդիրը կլանել է գյուղացուն ամբողջապես. նա ուրիշ բաների մասին ժամանակ չունի մտածելու» (3, էջ 85): Այս երկու կերպարների կենսափիլիսոփայության արմատական տարբերությունը հեղինակն առավելագույնս սեղմ արտահայտել է մի երկխոսության մեջ, երբ Մինասյանի «Ի՞նչ ես անում, ի՞նչ չեմ անում» հարցը հետևյալ շարունակությունն է ստանում. «– Ոչինչ. օրերս սպանում եմ առաջվա պես: – Այդ լավ է: Իսկ ինձ օրերն են սպանում: Եվ ի՞նչ շուտ են թռչում այս անիծված օրերը... » (3, էջ 78): Մեկի համար ժամանակը չի բավականացնում, այնքան որ անելիք կա, և այդ ամենը պետք է տեղին ու ժամանակին անել, իսկ մյուսը «ժամանակ է սպանում», անպատակ անցկացնում կյանքը:

Չորրորդ երիտասարդը՝ Բազենյանը, նույնպես գործունյա է, եռանդուն, կրքոտ խոսում է վեհ թեմաներից, բայց պարզվում է՝ պոռոտախոս սրիկայի մեկն է, խաբեությամբ գումար է կորզում տարբեր մարդկանցից իբր հայոց ազատագրական պայքարի համար:

Վեպի իրադարձությունները ծավալվում են Շահյանի շուրջ (պատումն ի վերջո ավարտվում է սրա ինքնասպանությամբ): Նար-Դոսը նրբորեն վերլուծում է երիտասարդ անբանի հոգեբանության փոխակերպումները. նախ՝ ատելություն շրջապատի կենսախինդ, նպատակամետ մարդկանց հանդեպ և անհիմն ագրեսիվության դրսևորումներ, ապա՝ ատելություն սեփական «ես»-ի հանդեպ և ինքնասպանություն գործելու մասին հայտարարություններ (որպես ծնողներին տանջելու միջոց), այնուհետև՝ լիակատար թմբիր, անտարբերություն, կաթվածահար վիճակ. «Շահյանի մեջ վառվող ինքնատյացության զգացումը, կամաց-կամաց բթանալով, փոխվեց խոր մելամաղձության: Այդ այն զարհուրելի մելամաղձությունն էր, որի ժամանակ մարդու հոգին կաշկանդվում է, միտքը թմրում, զգացմունքները բթանում, աշխարհը մութն է թվում, կյանքն՝ անտանելի, մահը՝ ցանկալի» (3, էջ 74):

Իհարկե, մեր կյանքում քիչ բան չկա, որ վիատեցնում է մեզ, հուսահատեցնում, կարող է նաև ծնել հոռետեսական տրամադրություն: Բայց հոռետեսություն էլ կա, հոռետեսություն էլ: Պատահական չէ, որ Մինասյանը, փորձելով ընկերոջը դուրս բերել անզգայությունից, մղել դեպի գործունյա կյանք, ընդունում է հոռետեսության գոյության իրավունքը, սակայն հորդորում է հաղթահարել դրա չպատճառաբանված, տվյալ պարագայում զուտ մտահայեցողական տեսակը. «Ես հասկանում եմ հոռետեսությունը, երբ դա արդյունք է կյանքի դառն փորձության, և այդ դեպքում հոռետեսն արդարանալու հիմքեր ունի. բայց քո հոռետեսությունն ախր լոկ երևակայական է, լոկ մտավորական և բռնազբոսիկ, չունի իրական ոչ մի հիմք, հետևաբար և՛ ոչ մի արդարացում և, համենայն դեպս, անպայման կործանարար է: Դու չափազանց անփորձ ես, դու ամենին չգիտես, թե կյանքի այն աննպատակավորության մեջ, որի վրա հիմնված է քո այդ շոպենհաուերյան հոռետեսական փիլիսոփայությունը, որպիսի մեծ ու քաղցր նպատակներ կան, որոնց համար, հավատացնում եմ քեզ, արժե ապրել, գործել և տանջվել» (3, էջ 400):

Նկատենք, որ մինչ պատումի ողբերգական հանգուցալուծումը Նար-Դոսն իր տարաբախտ հերոսին դնում է թեպետ արտաքուստ ծանր, բայց յուրատեսակ «թերապևտիկ» ներուժ ունեցող մի վիճակի մեջ (ինչը կարող էր փրկարար սթափեցում լինել, բայց հակառակին է հանգեցնում), երբ երկու աղջնակ փշուր-փշուր են անում կյանքի ունայնությունը հիմնավորող Շահյանի փաստարկները: Ուշադրություն դարձնենք երկու հակափաստարկի, որ բնավ էլ միայն դիպվածային արժեք չունեն, այլ համապիտանի դատողություններ են, ուղղված բոլոր նրանց, ովքեր մտորում են կյանքի և մահվան իմաստի մասին: Առաջինը վերաբերում է Շահյանի այն հայտարարությանը, թե կյանքն ունայն է, ձանձրալի, թե ինքը, այո, չի թաքցնում, որ ձանձրանում է հենց կյանքից: Զրուցակիցը կրքոտ հարցեր է տալիս (որոնց հոռետեսության կողմնակիցը չի կարողանում պատասխանել). «Ինձ համար

շատ հետաքրքրական է իմանալ, թե ինչպե՞ս կարելի է ձանձրանալ մի բանից, որը միայն մի՛ անգամ է տրվում մարդու: Կյանքը... Չէ՞ որ այդ ես եմ, այդ դուք եք, այդ այս գիրքն է, այս թանաքամանը, այս լուսանկարը, իմ եղբայրը, ամբողջ տիեզերքը, այն բոլորը, ինչ որ տեսնում, շոշափում և զգում եմ... Ինչպե՞ս կարելի է ձանձրանալ այս բոլորից... Խնդրում եմ բացատրեցեք» (3, էջ 64):

Համառ հարցապնդումներ են հետևում նաև հոռետեսի այն մտքին, թե ամեն ինչ անցողիկ է, մնայուն ոչինչ չկա, ուստի և կյանքն անիմաստ է, ու ապրելը՝ ձանձրալի: «Ի՞նչ եք ասում, պարոն Շահյան, հապա լավ գործը, լավ անունը, լավ հիշատակը: Մի՞թե դրանք չեն մնում, մի՞թե դրանք մեռնում են... Եթե մենք լավ նայենք մեր շուրջը, լավ քննենք մեզ շրջապատող առարկաները, հենց թեկուզ այս չնչին լուցկին, որի շնորհիվ մենք միշտ կարող ենք կրակ և լույս ունենալ, մենք կտեսնենք, որ այս բոլոր առարկաներից ամեն մեկը կապված է մի լավ գործի, մի լավ անվան, մի լավ հիշատակի հետ, որը մեռած չէ և երբեք էլ չի մեռնիլ, քանի մարդկությունը գոյություն կունենա: Ես այդպես եմ կարծում: Իսկ դուք, պարոն Շահյան, խնդրում եմ, դո՞ւք ինչ եք կարծում: Մի՞թե լավ գործը, անունը, հիշատակը, հիրավի, չեն մնում, մեռնում են» (3, էջ 66):

Նար-Դոսը շոշափել է հինավուրց մի թեմա, որի արծարծումները հանդիպում են առասպելների, հեքիաթների, կրոնի, գրականության, փիլիսոփայության մեջ, այն է՝ առանձին մարդու կյանքի վաղանցիկության և մարդկության հարատևման միջև կապը⁴: Հայ գրողի լուծումը, փաստորեն, այն է, որ հատկապես մարդկային սերունդների ժառանգորդման, մարդ արարածի մշակութաստեղծ գործունեության, քաղաքակրթության հարատևման շնորհիվ է իմաստավորվում ամեն մեկիս բաժին ընկած գոյության ժամանակահատվածը: Եվ ամեն հասուն մարդ պիտի իր տեղը գտնի մարդկության հավերժական երթի մեջ, ձգտի որևէ կերպ նպաստելու հանրային կյանքի բնականոն ընթացքին, իր սեփական կյանքը իմաստավորի ամենից առաջ այդ գիտակցմամբ:

Մինչդեռ մեր հոռետեսը շարունակում է համառել պնդելով, թե «կյանքը ինքնըստինքյան հուսահատեցուցիչ է», «ընդհանուր բացարձակ ունայնության գիտակցությունը չափից դուրս արդեն ճնշում է մարդուն» (3, էջ 68, 69): Եվ այստեղ «իններորդ ալիքը» լրիվ խորտակում է նրան՝ իր փաստարկներով հանդերձ: Զրուցակիցը հայտարարում է, որ ունայնության ճնշման դեմ կա հզոր հակամիջոց, երբ մարդն իր առջև նպատակներ է դնում և ձգտում դրանց իրականացմանը. «... Օրինակի համար, այնպիսի մի ձգտում, որի իրագործումը կարող էր երջանկություն բերել ոչ թե լոկ ձեզ, այլև ուրիշի համար, որքան կարելի է՝ շատերի, օրինակ՝ այն հասարակության կամ ազգի համար, որին պատկանում եք դուք... Մի՞թե դուք այդպիսի ձգտում չունեք» (3, էջ 70):

⁴ Տե՛ս Վ. Միրզոյան, Վաղանցիկության զգացումից դեպի հավիտենականության իմաստավորում // «Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, հոգեբանություն», 2017, № 2, էջ 3 – 20:

Մեկ ուրիշի համար այս սթափեցնող դատողությունները, կենսահաստատ ուղղորդումները միգուցե օգտակար լինեին, բայց Նար-Դոսի կերտած այս կերպարն այնքան ինքնահավան է, տղամարդակենտրոն մեծամտության մի այնպիսի մարմնացում, որ հիշյալ գրույցից միայն վիրավորվածության զգացում է տանում, ատելությամբ լցվում թե՛ այդ աղջիկների, թե՛ համայն մարդկության հանդեպ: Արդեն հեղինակը չի խնայում Շահյանին, և ինքն է անողորմ գրչով արձանագրում կատարվածը. «Բարոյական մի թեթև հարվածով այդ երկու աղջիկը տեղից շարժել էին անշարժության մեջ փտած երիտասարդին, ցնցել էին նրա թմրած ուղեղը և միմիայն այն պատճառով, որ իրենք կին էին և իրենց կին տեղովը նրան կյանքի նպատակն էին ցույց տալիս, տակնուվրա էին արել նրա ամբողջ էությունը» (3, էջ 68, 69): Ըստ էության, Շահյանն արդեն կենդանի դիակ է, և ինքնասպանությունը սոսկ այդ փաստի ֆիզիկական վավերացումն է:

Լևոն Շահյանի ինքնասպանությունը, իհարկե, վշտացնում է վեպի գործող անձանց, ինչպես վշտացնում է նաև ընթերցողին, բայց առաջացնում է միայն խղճահարություն և ափսոսանք, տեղ չի թողնում համակրանքի, ինչն ավելի է ամրապնդվում նրա թողած «Իմ վերջին խոսքը» նամակ-բացատրության դատողություններով: Կյանքը որպես մեծագույն արժեք ընկալելու անկարողությունը, սեփական ունայն գոյության պատճառած մաղձը, Արթուր Շոպենհաուերի փիլիսոփայության թերի ըմբռնումը Շահյանը հիմք է դարձրել ամբողջ մարդկությանը դատապարտելու. «Կալիգուլան ափսոսում էր, թե ինչո՞ւ հռոմեացիք մի գլուխ չունեին, որ թրի մի հարվածով վերջ տար նրանց կյանքին: Նա ափսոսում էր չարությունից: Նույնն էս եմ ափսոսում ամբողջ մարդկության համար, միայն խղճահարությունից» (3, էջ 416): Դժվար է հավատալ, որ սա խղճահարություն է. իրականում շրջված ագրեսիայի տեսակ է, իր չկայացած կյանքի համար չարությունը ինքնասպանը շրջում է բոլորի դեմ, և անգամ նրա վերջին բառերն անգոր չարությամբ լի անեծքի են նման. «Ես մեռնում եմ խղճալով ձեզ, կյանքի՛ ստրուկներ, որ ինչքան էլ կամենաք ապրել, այնուամենայնիվ վերջ ի վերջո պիտի գաք իմ ետևից» (նույն տեղում):

Լևոն Շահյանը չկայացած անձնավորություն է, թեպետ առարկայական բոլոր պայմանները կային լիարժեք կյանքի, իմաստալից զբաղմունքի, անձնական երջանկության համար: Մինչդեռ հենց նյութական ապահովվածությունը, ամեն ինչ առանց ջանքի ստանալու հնարավորությունը, հետաքրքրասիրության պակասը, հոգևոր պահանջմունքների աղքատությունը երիտասարդին դարձրին կյանքի համար ոչ պիտանի: Մահվան անխուսափելիության մասին դատողությունները և դրանից իբր կյանքի իմաստագրկումը նրա համար սոսկ պատրվակ էին սեփական հոգու դատարկության ինքնարդարացման: Նույն նպատակին էր ուղղված նրա ընթերցանությունը. կարդում էր (թեպետ ոչ միշտ էր

ստույգ հասկանում կարդացածը) առավելապես հռոետեսական բնույթի գրականություն: Ահա և Արթուր Շոպենհաուերի պարագայում. բացարձակ անպատրաստ փիլիսոփայելու և հասկանալու գերմանացի փիլիսոփայի մտքերը, «հանկարծ ինքին փչեց, որ թարգմանի այդ գրվածքը», փաստորեն նույնիսկ ոչ թե բուն Շոպենհաուերի աշխատությունը, այլ դրան վերաբերող ռուսերեն մի գիրք: Եվ բնականաբար, ինչպես արձանագրում է Նար-Դոսը, դեռ հասարակ տեղերը մի կերպ թարգմանում էր, «իսկ այն տեղերում, ուր ինդիրը քննվում էր մետաֆիզիկայի, հոգեփոխության, զանազան կրոնների և այլ դժվարամարս տեսակետներից, Շահյանը պարզապես բան չէր հասկանում» (3, էջ 75, 76): Զարմանալի չէ, որ այս հարցում ևս երիտասարդը ձախողվում է, վերստին հարկադրված է դառնորեն գիտակցելու սեփական անպիտանությունը, մի գիտակցություն, որը արժեքային մեկ այլ համակարգ ունեցողի պարագայում կարող էր հոգեպես վերափոխել մարդուն, բայց Շահյանին դարձյալ նետում է անգործության, «օրերն սպանելու» տրամադրության գիրկը:

Շատ հակիրճ՝ արդյոք ճիշտ է արտացոլված Արթուր Շոպենհաուերի փիլիսոփայությունը: Սա մանրուք չէ, մանավանդ որ, ինչպես ասվեց, Շահյանը ծանոթանում է նրա վարդապետությանը միջնորդի միջոցով: Այդ պարագայում անխուսափելի է տարածված կարծրատիպի անքննադատ յուրացումը: Իհարկե, Շոպենհաուերը համարվում է հռոետեսական փիլիսոփայության հիմնադիրներից մեկը, և, իրոք, նա ամեն կերպ պսակագերծում է մարդկային կյանքին առնչվող «լավատեսական կանխակալ դոգմաները», ամենամոայլ գույներով շարադրում է կենսական տառապանքները, հուսահատությունը, անգործությունը, արձանագրում է մարդկանց տարատեսակ արատները: Կյանքը ներծծված է ողբերգականությամբ, երջանկությունը երևութական է, խաբուսիկ, անցողիկ, իսկ տառապանքները՝ մնայուն և անխուսափելի: Այդուհանդերձ, Շոպենհաուերը ոչ միայն չի քարոզում ինքնասպանություն, այլև կարևորում է ապրելու կամքը: Իր հայացքները հագեցնելով ստոիկյան և հինհնդկական փիլիսոփայության, նաև միստիցիզմի տարրերով, գերմանացի մտածողն ընթերցողին հաշտեցնում է մահվան անխուսափելիության հետ: Զուր չէ փիլիսոփայության անձնային նշանակության նրա հակիրճ բնութագրումը՝ «մեր մխիթարությունը այս անուրախ կյանքում»⁵: Եսականությունը մարդկանց անխուսափելիորեն դարձնում է շահամոլ, ազահ, նախանձ, խորամանկ և այլն, բայց այս ամենի կողքին Շոպենհաուերը ընդունում է «շիտակ բարության», «այլոց հանդեպ անշահախնդիր սիրո» գոյությունը, դրվատանքով է խոսում «վերին աստիճանի բարի և կատարելապես ազնիվ մարդկանց» մասին, որոնք հանուն ուրիշի տառապանքները մեղմելու ունակ են մոռանալու սեփականը և զոհաբերելու ոչ միայն իրենց բարեկեցությունը, այլև կյանքը⁶:

⁵ Шопенгауэр А. Мир как воля и представление. Т. 1. М., 1993, с. 132.

⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 470:

Շոպենհաուերը հորդորում է ընթերցողին գնահատել առկա օրը, չընկնել անցյալի հուշերի գիրկը և չենթարկվել ապագայի ամուլ անուրջներին: Ահավասիկ. «Մենք խոժոռված անտեսում ենք հազարավոր պայծառ, դուրալի ժամեր, դրանցից հաճույք չենք ստանում, որպեսզի հետո, մեր սև օրերին, հիշենք դրանք անգոր թախիժով: Դրա փոխարեն մենք պարտավոր ենք ամեն մի, փոքրիշատե տանելի, թեկուզ ամենասովորական ներկայի, որ այժմ անտարբեր կերպով անտեսում ենք և անգամ անհամբերությամբ արագացնում, վերաբերվել հարգանքով, մշտապես հիշելով, որ հատկապես այս պահին է տեղի ունենում անցյալի մեծարումը, որը հետո, պայծառացած անմահության լույսով, առհավետ պահպանվելու է հիշողության մեջ և երբեմն, հատկապես դառն օրերին, պատկերանալու է մեզ որպես մեր շիտակ ցանկության իդեալ»⁷:

Շոպենհաուերից միջնորդի մեկնաբանությամբ Շահյանը վերցրել է միայն այն, ինչը հաստատում է սեփական տրամադրությունը: Այստեղ խախտվել է ճշմարիտ փիլիսոփայությանը հաղորդակցվելու մի կարեվոր պայման: Շոպենհաուերը քանիցս շեշտում է, թե Կանտին հնարավոր չէ հասկանալ ուրիշի շարադրանքի միջոցով, «գուր է Կանտին որոնել մեկ այլ տեղ, բացի նրա սեփական ստեղծագործություններից»⁸: Ասվածն արդարացի է նաև Արթուր Շոպենհաուերի համար: Վերջինիս գրվածքը անմիջականորեն կարդալիս մելամաղձոտությամբ տառապող Լևոն Շահյանը կտեսներ նաև սեփական ախտորոշումը. «...Տառապանքը միշտ զոյանում է, իսկն ասած, այն անհամապատասխանությունն է, որ կա մեր պահանջածի ու ակնկալածի և մեզ տրվածի միջև, և այդ անհամապատասխանությունը, անտարակույս, արմատավորված է իմացության մեջ, և խորն ըմբռնման պարագայում այն կարող է լիովին վերացվել»⁹: Դժվար է ասել, այս պարագայում երիտասարդը կգնար ստոիկյան տոկունության¹⁰, թե՛ հնդկական նիրվանայի ուղղությամբ, իսկ միգուցե սթափ ինքնագնահատականով վերադառնա՞ր դեպի գործունյա կյանք: Իսկ որքա՞ն փրկարար կլինեք, եթե ծանոթանար Շոպենհաուերի կենսագրությանը, կտեսներ, որ հոռետեսության այս տեսաբանն ապրել է լիարժեք և երկարատև կյանքով, իրեն բնավ չի գրկել գեղեցիկ սեռի ընկերակցությունից, մեծագույն հաճույք է ստացել փիլիսոփայական աշխատություններ գրելիս: Պետք է հասկանալ քարոզի և քարոզիչի տարբերությունը, այս դեպքում՝ հակադրությունը. իսկապես, մի կողմից «Շոպենհաուերի համար ակնհայտ էր, որ միայն ապուշը կարող է կարծել, թե ինքը ծնվել է լավ ապրելու համար», այնքան որ անվերջանալի են տառապանքները, և կյանքն ինքը լոկ խաբուսիկ պատրանք է¹⁰, մյուս կողմից՝ զավեշտն այն է, որ «Շոպենհաուերը ինքնասպանության հասցեին գովեստներ էր շռայլում կերուխումի ճոխ

⁷ Шопенгауэр А. Афоризмы и максимы. Л., 1990, с. 115.

⁸ Шопенгауэр А. Мир как воля и представление. Т. 1, էջ 136.

⁹ Երկն տեղում, էջ 220:

¹⁰ Տե՛ս Eagleton T. The Meaning of Life. Oxford, 2008, էջ 53:

սեղանի շուրջ նստած»¹¹: Մեր եզրակացությունը մեկն է. որևէ գաղափարի թերի յուրացումը, հատկապես ծույլ և ստեղծագործելու անկարող մեկի համար, բնավ էլ լավ չի ավարտվում, ինչպես դրանում մեզ համոզում է Նար-Դոսը իր այս վեպի հիմնական կերպարի ունայն կյանքի ավարտի օրինակով:

Սեփական կյանքի իմաստավորման, ամենաձանր փորձություններից հաղթանակով դուրս գալու, հուսահատությունն ու վիստությունը հզորության վերածելու կարողության մի իսկական ձոն է «Ես և նա» պատմվածքը: Նար-Դոսը գրական տարածված հնարք է գործադրել՝ իբր ձեռքն է ընկել անհայտ մեկի հիշատակարանը, որն էլ տպագրության է հանձնում: Միտո և դավաճանության երկու պատմության մասին է առաջինը հիշատակարանի տիրոջն է, որն իրեն «կորած մարդ» է բնութագրում, երկրորդը վերջինիս հայտնաբերած «Վրեժ» վերնագրով պատմվածքն է, որ նա թարգմանաբար կցել է հիշատակարանին: Վերջինիս տերը բնավ էլ «կորած մարդ» չի եղել սկզբնապես, այլ համալսարանի ավարտական կուրսի ուսանող, փայլուն հեռանկարներ ունեցող, և սակայն երբ սիրած աղջիկը դժուր է խոստումը, ամուսնանում մեկ ուրիշի հետ, սա կոտրվում է, թողնում համալսարանը, դառնում հարբեցող: Այդուհանդերձ, սակավաթիվ սթափ պահերին նրան այցելում է ինքնավերլուծության մարմաջը. «Ի՞նչն էր բուն պատճառը, որ ես այս աստիճան ընկել էի» (1, էջ 136): Եվ ինքն էլ է գիտակցում, որ դժբախտ սերն այդպես չէր կարող առմիշտ կործանել մարդուն. «Ու սկսեցի այդ պատճառը որոնել սիրածս աղջկա դավաճանությունից դուրս, որոնել իմ էության մեջ, որովհետև անկարելի էր, որ ես այս աստիճան ընկնեի, եթե անկմանս սաղմերը չկրեի ինքս իմ մեջ» (նույն տեղում): Եվ կարողավ «Վրեժ» պատմվածքը՝ ստանում է պատասխանը: Այս դեպքում արդեն սոցիալական անհավասարության հիմքով մերժված սիրահարը («Մենք վերեն ենք, դու՝ ներքևը») ոչ թե կործանվում է, այլ դառնում հոչակավոր ջութակահար, իսկ իրեն այցելած և սերը խոստովանող նորատի տիկնոջն արժանի պատասխան տալիս. «Ես երդվեցի վրեժ առնել և, դրա համար ուրիշ միջոց չգտա, բայց եթե միայն բարձրանալ, միշտ բարձրանալ, անդադար բարձրանալ, մինչև որ իր ձեռակերտ ապարանքի բարձունքից ինձ վրա նայող քմահաճությամբ ինքը գար իմ անձեռակերտ բարձունքի առջև ծնրադրելու: Այսօր ես հասա իմ նպատակին: Բայց նորից սիրել նրան, ով տարբերություն է դնում վերևի և ներքևի միջև, ավա դ, սինյորա, ես չեմ կարող» (1, էջ 144): Երկու մերժվածների վարվելակերպի այս համեմատությունը «կորած մարդուն» հանգեցնում է միակ եզրակացությանը. ինքը՝ «տաքուկ ապրելու սովոր, կամագուրկ, փափկամարմին մի ինտելիգենտ», ընկավ առաջին իսկ հարվածից և չփորձեց ոտքի կանգնել, մինչդեռ երիտասարդ ջութակահարը գտավ կյանքն իմաստավորելու միակ ճիշտ ուղին՝ սեփական աշխատանքով

¹¹ Камю А. Творчество и свобода. М., 1990, с. 33.

հասնել կատարելության բարձունքին, «որպեսզի այնտեղից իր վրիժառուության թույնը թափի իր մարդկային արժանապատվությունն արհամարհողների, իրեն նվաստացնողների գլխին» (1, էջ 144, 145):

Աշխատանքը, ստեղծագործությունը, հանրագուտ զբաղմունքը, կատարելության ձգտումն այն կենսական արժեքներն են, որոնք, ըստ Նար-Դոսի, ունակ են լցնելու մեր կյանքը, հնարավորություն են տալիս իմաստ և նպատակ տեսնելու, լիարժեք ապրելու, անցնելու մեր ճանապարհը: Եվ քանի որ գեղարվեստական գրականությունը ոչ միայն արտացոլում է իրական կյանքը իր բազմաբարդ խնդիրներով, այլև հակադարձ ազդեցություն է գործում, հեղինակի պատկերացումներն ու մտորումներն առաջարկում որպես կենսական խնդիրների լուծման տարբերակ, համաձայն ենք հայ դասական գրականության պայծառ դեմքերից մեկի եզրակացությանը, այն է՝ որքան էլ առարկայական հանգամանքները կանխապայմանավորեն մեր կենսական ուղին, միևնույնն է, ընտրությունը մարդունն է. միշտ էլ հնարավոր է հիասթափվել, հուսալքվել, հոռետես դառնալ, բայց իրականում ավելի շատ են իմաստալից կյանքով ապրելու հիմքերը:

Բանալի բառեր – *Նար-Դոս, կյանքի իմաստ, հոռետեսություն, «Մահը» վեպը, ունայնություն, Շոպենհաուեր, ձգտում, լավատեսություն*

ВАЛЕРИЙ МИРЗОЯН – Нар-Дос о смысле жизни. – В статье ставится проблема смысла жизни и смерти в творчестве выдающегося армянского прозаика Нар-Доса (1867–1933). Анализ сосредоточен на одном из основных его произведений – романе “Смерть”. Освещено и оценено отношение писателя к пессимистической общественной позиции и соответствующим взглядам. Хотя романы Нар-Доса увидели свет более века назад, воззрения некоторых его персонажей и сегодня представляются весьма современными, а решения, предложенные в его книгах, удивляют актуальностью и дают обильную пищу для размышлений.

Ключевые слова: *смысл жизни, пессимизм, роман “Смерть”, бренность, Шопенгауэр, оптимизм*

VALERI MIRZOYAN – Nar-Dos on the Meaning of Life. – The article discusses the questions about the meaning of life and death in works of outstanding Armenian writer Nar-Dos. The emphasis is on the detailed analysis of one of the fundamental works by Nar-Dos, the novel "The Death". The attitude of Nar-Dos towards the people with the pessimistic orientation to life is shown here. Though the novels of the Armenian writer were published more than 100 years ago, his characters, the multifaceted reality of human life, the solutions proposed by the author are quite topical and provide a rich source of thought to the present generation.

Key words: *Nar-Dos, the meaning of life, pessimism, the novel "The Death", vanity, Schopenhauer, strive, optimism*

Ներկայացվել է՝ 01.12.2018, գրախոսվել է՝ 08.02.2019, ընդունվել է տպագրության՝ 27.02.2019